

Պարտատոմսի գրավով վարկ				
Վարկի նպատակը		Սպառողական		
Ռեզիդենտություն		Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ		
Վարկառու/գրավատու		18 տարին լրացած ֆիզիկական անձ		
Վարկի արժույթ		ՀՀ դրամ		
Գրավի արժույթ		ՀՀ դրամ	Արտարժույթ	
Վարկի ժամկետ		3-36 ամիս, բայց ոչ ավել քան գրավադրվող պարտատոմսի ժամկետի ավարտ*		
Վարկի նվազագույն գումար		1,000,000 ՀՀ դրամ		
Վարկի առավելագույն գումար		Գրավի առարկայի մինչև 90%		
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/		Գրավադրվող դրամային պարտատոմսի տարեկան եկամտաբերություն+3%		
Տարեկան փաստացի տոկոսադրույք		14,06%-14,91%		
Գրավի առարկա		«Ֆասթ Բանկ» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսեր ` ՀՀ դրամ և արտարժույթ		
Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն /LTV/	Տոկոսագումարի ամսական վճարմամբ կամ անուիտե-տային մարման գրաֆիկ	90%		80%
	Մայր գումարը և տոկոսագումարը ժամկետի վերջում	Մինչև 12 ամիս	Մինչև 24 ամիս	Մինչև 12 ամիս
		70%	60%	60%
Վարկի տրամադրման միջնորդավճար		Չի պահանջվում		
Վարկի սպասարկման միջնորդավճար		Չի պահանջվում		
Մարման եղանակը		➤ Տոկոսագումարի ամսական վճարմամբ ➤ Մայր գումարը և տոկոսագումարը ժամկետի վերջում/ ➤ Մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասար-րաչափ վճարում (անուիտետ)		
Վարկի տրամադրման եղանակ		Անկանխիկ		
Վարկի վաղաժամկետ մարման տույժ		Առկա չէ		
Ժամկետանց մայր գումարի տույժ		0,1% օրական		

Ժամկետանց տոկոսագումարի տույժ	0,13% օրական
Վարկառուի վարկային պատմության պահանջները	Վարկի տրամադրման պահին գործող վարկային պարտավորությունները և այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի կամ անհուսալի ռիսկի դասերով:

! Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները:

! Պարտատոմսի գրավի իրավունքի գրանցման վճար՝ գրավադրվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0,005%, բայց ոչ պակաս քան 5,000 ՀՀ դրամ:

1. Նույն գրավով ապահովված մեկից ավելի վարկի դեպքում վարկ/գրավ հարաբերակցությունը չի կարող գերազանցել համապատասխան սահմանաչափը:

2. Արտարժույթով գրավի դեպքում վարկի հասանելի գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման պահին Բանկի առքի փոխարժեքով սահմանված փոխարժեքը:

3. Պարտատոմսը և դրա նկատմամբ պահանջի իրավունքը կարող է հանդիսանալ գրավի առարկա, եթե.

- Արգելանքի տակ չի,
- Չի հանդիսանում այլ (այդ թվում՝ երրորդ անձանց տրամադրված) վարկի ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկա, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցով ապահովված բոլոր, ներառյալ նոր տրամադրվող վարկերի հանրագումարի համար պահպանվում է վարկատեսակով սահմանված առավելագույն վարկ/գրավ հարաբերակցությունը:

4. Մեկ վարկը կարող է ապահովված լինել Բանկի կողմից թողարկված նույն կամ տարբեր արժույթով թողարկված պարտատոմսով: Տվյալ դեպքում՝

- Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը տարբեր լինելու դեպքում հիմք է ընդունվում Պարտատոմսերի միջին կշռված տարեկան եկամտաբերությունը,
- Պարտատոմսերի ժամկետը տարբեր լինելու դեպքում վարկի առավելագույն ժամկետը սահմանվում է հիմք ընդունելով Պարտատոմսերի նվազագույն ժամկետը:

Ծանոթություն

1. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

2. Անհրաժեշտ փաստաթղթեր՝

- Անձը հաստատող փաստաթուղթ,
- Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում տեղեկանք (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում չի պահանջվում),
- Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր:

3. Վարկը տրամադրվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում:

4. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.

- Վարկառուի/Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,

5. Վարկի մերժման գործոններն են.

- Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր,
- Վարկառուի/Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,

6. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում, Հաճախորդին տեղեկացում 1աշխատանքային օրվա ընթացքում և վարկի տրամադրում՝ 3աշխատանքային օրվա ընթացքում:

7. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկի Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

8. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԼ

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ, ԵԹԵ ՎԵՐՋԻՆՍ ՀԱՇՎԵԳՐՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ, ԻՍԿ
ՅՐԴ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՆՎԱՋԵՑՄԱՆ:

9. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների
տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝
fastbank.am ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

10. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՈԻՄ ԲԱՆԿԸ Յ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ
ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ
ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝
ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ
ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

11. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է
ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՈԻՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԿԱՅՔՈՒՄ՝ www.fastbank.am:

12. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ
ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ
ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

13. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ԱՌԱՋԱՐԿՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՂ ՀԱՄԱՐ
ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐՔԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳ Է:

14. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ
ԲՈՂԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ
ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ